



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 2275-Ա/2

«02» նոյեմբերի 2023 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի N 1039-Ա/2
ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի օգոստոսի 16-ի N 1496-Ա/2 հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2023 թվականի հոկտեմբերի 30-ին կայացած նիստի արձանագրությունը և ելնելով 2023 թվականի բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հուլիսի 10-ի N 1039-Ա/2 հրամանի համաձայն կազմակերպված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերի

աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2023 թվականի նոյեմբերի 1-ից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝

ԺԱՆՆԱ ԱՆԴԻԵԱՍՅԱՆ

ՑԱՆԿ

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
2023/2 ՄՐՑՈՒՅԹԻ
ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ**

Բնագավառ	Ծածկագիր	Ազգանուն անուն հայրանուն	Թեմայի վերնագիր	Կազմակերպություն
1 Էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ	23-2DP-2B008	Ահարոնյան Ահարոն Կամոյի	Ռադիոհաճախականային ճառագայթում ունեցող անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) ուղղորոշումից հետո նրանց ռադիոհաճախային խլացման համակարգի նախագծում, պատրաստում և փորձարկում	Հայ-ռուսական համալսարան ԲՄԿ ՊՈՒՀ
2 Նյութագիտություն	23-2DP-2F012	Բարսեղյան Մանուկ Գևորգի	Միկրո և նանո չափանի մասնիկների և բազալիթի թելքերի հավելումներով նոր սերնդի բետոնների ստացման և դրանց կիրառմամբ երկաթբետոնե կոնստրուկցիաներով պաշտպանական կառույցների նախագծում և փորձարկում	«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ
3 Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ	23-2DP-1B001	Բարսեղյան Վանյա Ռաֆայելի	Ղեկավարվող ԱԹՍ-ն թիրախին հետապնդման և մոտեցման մաթեմատիկական լուծումների ու ծրագրերի մշակում	ՀՀ ԳԱԱ «Մեխանիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ
4 Ֆիզիկա և աստղագիտություն	23-2DP-1C023	Գրիգորյան Վահրամ Լևոնի	Ցրող միջավայրերով օպտիկական նկարահանում ժամանակային փականով նկարահանման համակարգով	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
5 Էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ	23-2DP-2B022	Դարբինյան Հայկանուշ Գուրգենի	10 կգ օգտակար բեռով էլեկտրական շարժիչով թևավոր բեռնատար ԱԹՍ-ի նախագծում և նախատիպի պատրաստում	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ
6 Նանոտեխնոլոգիա	23-2DP-2J002	Երեմյան Արշամ Սերոբի	Ապակիներում փուլային և ամպլիտուդա-փուլային միկրոկառուցվածքների գերարագ լազերային գրանցման մեթոդի մշակումն ու կիրառումը լազերային փնջերի ձևավորիչների և օպտիկական նշանառության սարքերի պատրաստման նպատակով	«Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամ

Բնագավառ	Ծածկագիր	Ազգանուն անուն հայրանուն	Թեմայի վերնագիր	Կազմակերպություն
7 Ֆիզիկա և աստղագիտություն	23-2DP-1C016	Մանուկյան Արամ Սպարտակի	Մեխանիկական ակտիվացմամբ սակավազազ ռեակցիաներ՝ ջերմակայուն և կարծր նյութերի ստացման համար	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ
8 Ֆիզիկա և աստղագիտություն	23-2DP-1C010	Մարգարյան Նարեկ Բաբիկի	Միջավայրի ջերմային ֆոնին ինքնուրույն ադապտացվող «խելացի» թաղանթներ	«Ա.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ
9 Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ	23-2DP-1B004	Սարգսյան Վահե Գնելի	Ռադիոպատկերների միջոցով վերգետնյա շարժվող նշանակետերի դասակարգում	ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ